ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանին Բրյուսել (Բելգիայի Թագավորություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Վիգեն Քոչարյան:

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Բրյուսել (Բելգիայի Թագավորություն), 2017թ. մայիսի 28-ից 31-ը:

Գործուղման նպատակը՝ Արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով Հայաստան-ԵՄ համագործակցության ենթակոմիտեի ութերորդ նիստի մասնակցություն:

Քննարկված թեմաները՝ Արդարադատության, ազատության և անվտանգության առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2017թ. մայիսի 30-ին Բրյուսելում (Բելգիայի Թագավորություն) կայացել է Արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով Հայաստան-ԵՄ համագործակցության ենթակոմիտեի ութերորդ նիստը: Հայկական կողմից նիստի համանախագահող է հանդիսացել ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը: ՀՀ պատվիրակության կազմում ընդգրկված են եղել ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության ներկայացուցիչները:

Արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով Հայաստան-ԵՄ համագործակցության ենթակոմիտեի ութերորդ նիստի բացման խոսքում ՀՀ պատվիրակության ղեկավար, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը կարևորել է ՀՀ-ԵՄ միջև երկխոսությունը և տարբեր

ոլորտներում առակա համագործակցության զարգացումը, ինչպես նաև ընդգծել, որ արդարադատության, ազատության և անվտանգության հարցերը հանդիսանում են այդպիսի համագործակցության առանցքային ոլորտներից մեկը:

Արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով Հայաստան-ԵՄ համագործակցության ենթակոմիտեի ութերորդ նիստի ընթացքում բազմակողմանի քննարկման առարկա են դարձել դատաիրավական բարեփոխումները, քրեական գործերով իրավական փոխօգնությունը, միգրացիան և սահմանային անվտանգության ապահովումը, վիզային ռեժիմի դյուրացումը և հետընդունման համաձայնագրերի կատարումը, կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, այդ թվում՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման, ահաբեկչության, թմրանյութերի անօրինական շրջանառության, փողերի լվացման դեմ պայքարը, հակակոռուպցիոն քաղաքականության իրագործումը և այլ հարցեր:

Արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով Հայաստան-ԵՄ համագործակցության ենթակոմիտեի ութերորդ նիստի աշխատանքների ավարտին՝ կողմերը դրական են գնահատել առկա համագործակցության մակարդակը և ընդգծել համատեղ նախագծերի և ապագա գործողությունների կարևորությունը:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Վիգեն Քոչարյան